

ՓՈՐՁՈՒԹԱՆ ՄԷՋ Ե՞Ս

Յիսուս Սուրբ Հոգիով լեցուած՝ վերադարձաւ Յորդանանէն: Ապա Սուրբ Հոգիին կողմէ առաջնորդուած՝ գնաց անապատ, ուր քառասուն օր փորձուեցաւ Սատանայէն: Այդ օրերուն ո՛չ կերաւ եւ ո՛չ ալ խմեց: Երբ քառասուն օրերը ամբողջացան, Յիսուս անօթեցաւ:

Սատանան ըսաւ իրեն.

– Եթէ Աստուծոյ Որդին ես, հրամայէ՛ որ այս քարը հաց դառնայ:

Յիսուս պատասխանեց.

– Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Մարդ միայն հացով չ’ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով»:

Ապա Սատանան հանեց գիմֆ բարձր լեռ մը եւ ակնթարթի մը մէջ իրեն ցոյց տուաւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ ըսաւ.

– Այս բոլորին վրայ իշխանութիւն եւ անոնց փառքը քեզի կու տամ: Անոնք ինձի տրուած են եւ, որու որ ուզեմ՝ կու տամ: Արդ, եթէ ինձի երկրպագութիւն ընես՝ այդ բոլորը քեզի պիտի ըլլան:

Յիսուս ըսաւ.

– Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագես եւ զայն միայն պաշտես»:

Յետոյ Սատանան զայն երուսաղէմ տարաւ եւ կանգնեցուց տաճարի աշտարակներէն մէկուն վրայ եւ ըսաւ անոր.


– Եթէ Աստուծոյ Որդին ես, դուն քեզ այստեղէն վար նետէ: Քանի Սաղմունքուն մէջ գրուած է, թէ «Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ, որ քեզ պահպանեն» եւ, թէ «հրեշտակները քեզ իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցընեն, այնպէս որ ոտքդ քարի չզարնուի»:

Յիսուս պատասխանեց.

– Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուածդ չփորձես»:

Սատանան ամէն տեսակի փորձութիւն վերջացնելէ ետք՝ ժամանակուան մը համար հեռացաւ Յիսուսէն:

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎԻԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀՎՏԱՆՈՒՄԸ


2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ս. Պատարագի ընծաները՝ նշխարն ու գինին Ս. Սեղանին վրայ են: Պատարագի քահանան, որպէս մաքրութեան նշան դարձեալ ձեռքերը կը լուայ, որովհետեւ իր մատները պիտի հային Փրկչական Մարմնոյն եւ Արեան:

Ժողովուրդը եւս իր հոգին պէտք է ցօղուէ, որպէսզի պայծառ մտքով ու հաւատքով, մաքուր սրտով, սրբութեամբ ու երկիրով ընկալէ խորհուրդը, եւ ահաւասիկ կատարելութեան առաջնորդող սարկաւազին դաստիարակիչ թելադրութիւններն են, որոնք Ս. Խորանէն ժողովուրդին կ’ուղուին.- «Մանաւանդ հաւատքով, սրբութեամբ եւ երկիրով աղօթքի կանգնիք...»

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆԻՍ 2024

ԹԻՒ 23

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԿԱՆՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
ԵՍ. 1.2-15: ՀՁ. 6.12-23: Մատթէս 12.1-8

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12. 1-8

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ’անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տե՛ս, աշակերտներդ ի՛նչ կ’ընեն: Բան մը, որ արգիւտած է Շաբաթ օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած, թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը եւ սակայն ասիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ’ըսես՝ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք, թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ’ուզեմ եւ ոչ թէ՛ գոհ», այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին»:

Աստուծոյ փառքին համար ծառայողը միշտ պէտք է ծառայէ առանց ժամանակ սահմանելու կամ օր նշանակելու: Բարիք ընելը այս աշխարհին վրայ արգիւտած եւ արտօնուած օրեր չունի, այլ՝ երբ անհրաժեշտ է, որ մենք ուրիշին օգտակար դառնանք, նոյնիսկ այդ օրը արձակուրդի կամ հանգիստի օր ըլլայ, պէտք է օգնենք: Բոլորս կոչուած ենք ծառայելու: Ծառայենք, բարիք գործենք, կամ չճանաչուին օգտակար դառնանք, որպէսզի Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւը լիովին կատարենք: Մեր կեանքը միշտ ապրի՛նք Աստուծոյ համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՀԱՅՈՑ ՍՐՏԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԵԾՆ ԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ



Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրով: Ան թագաւորին փարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պետք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի թոռը՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵԾ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սիրտին մէջ քրիստոնէական ազնիւ գգացումները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ կը փառաբանէր իր ժողովուրդը, որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ չողբան, այլ՝ յարութեան յոյսը ի մտի ունենալով երկինքի արքայութեան հաւատան: Անդադար կը փառաբանէր, որ մարդիկ բարեգործութեան ետեւէն ըլլան եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չփաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլուխը անցնելով, մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր:

Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, ֆահանաներ, եպիսկոպոսներ եւ ֆարոգիչներ ամէն կողմ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սիրտի լուսաւորիչ:

Հայ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ներսէս Հայրապետին տօնը կը գուգարիսի Շաբաթ, 9 Յունիս, 2024-ին:

ԻՆՉ ԸՍԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔ

Կը տրվինք Սուրբ Գիրքէն, թէ Ադամ չպահեց աստուածային պատերը իր դրախտային կեանքին մէջ: Այս պատիրանազանցութիւնը կամ անհնազանդութիւնը ըստ աստուածաբաններու կը կոչուի առաջին (սկզբնական) մեղք, որ Ադամէն ժառանգաբար անցած է սերունդէ սերունդ բոլոր մարդոց:

Գրիգոր Տաթեւացին այսպէս կը սահմանէ այդ մեղքը. «Ադամին մեղքը այն է, որ կորսնցուց արդարութիւնը եւ մեղքով ու ցանկութեամբ ծնաւ իր որդին, այն է սկզբնական մեղք ըսուածը, որ չի քաւուիր, եթէ չմկրտուի Քրիստոսի մահով»:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՊԻՏԻ ԶՎԻՐԱՒՈՐԷ ՔԵԶ, ԱՆ՝ ՈՐ ՎԻՐԱՒՈՐՈՒԵՅԱԼ ՔԵԶԻ ՀԱՄԱՐ

Յիսուս ինք, որ արգիլեց մարդոց դատապարտելու մեղաւոր կիներ՝ բնաւ պիտի չդատապարտէ մեզ: Ինք, որ մեռաւ մեզի համար՝ երբեք չ'ուզէր մեռնել մեզ: Ինք, որ մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ՝ պիտի չվիրաւորէ մեզ: Ինք, որ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ՝ չ'ուզէր ծեծել մեզ (Եւ. 53.5): Ինք, որ ճզմեց Սատանային գլուխը՝ չ'ուրախանար մեր ալ գլուխը ճզմելով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Միբելի բարեկամ, կը հաւատա՞ս այս բոլորին: Կը հաւատա՞ս Յիսուսի սիրոյն եւ ներող հոգիին: Կը հաւատա՞ս, որ ան մեռաւ որպէսզի իր մահովը քեզ անմահութեան զաւակ դարձնէ: Կը հաւատա՞ս, որ դուն իրեն համար երկինքէն աւելի գեղեցիկ ու ցանկալի ես: Կը հաւատա՞ս, որ ան զօրեղապէս կը փափաքի տեղ ունենալ սիրտիդ մէջ եւ տեղ տալ քեզի իր սիրտին մէջ: Կը հաւատա՞ս, որ անոր ամենակալ ձեռքը պաշտպանութեանդ համար է եւ ոչ թէ կործանումիդ համար: Եթէ կը հաւատաս այս բոլորին՝ ինչպէս կ'արտայայտես հաւատքդ Յիսուսի հանդէպ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵԹԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏԵԱԿ, ԹԷ Ո՛Վ Է ԱՍՏՈՒԱԾՆ ԸՆԴՈՒՄՆԵՆԻ ՄԱՐԳԸ ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 24

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ինք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն: Ո՞վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու: Ո՞վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան, որ մաքուր է իր գործերով ու մտածումներով: Ան, որ ստութեան անձնատուր չէղաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէ՛ս կ'ըլլայ աստուածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայութեանդ գայ, ո՞վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Տէ՛րն է, հօր եւ անպարտելի, Տէ՛րը, պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Ամենակալ Տէ՛րը, ինքն է փառաւոր Թագաւորը:

Նեղութեան՝ թէ ուրախութեան պահուն կարդանք Սաղմոսագիրքէն